# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՉԻՆՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՉ-24/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Համազգեստ՝ (Արդարադատության պետական խորհրդականի դասային աստիճան ունեցող ծառայողի համապատասխան ուսադիրներով և թևքանշանով) - լրակազմ Գլխարկ հովարով՝ մուգ կապույտ կիսաբրդյա (317գ/մք խտությամբ, 67%բուրդ, 33%Պ/Է) ±3% կտորից, մուգ կապույտ մահուդե (342գ/քմ 100%բուրդ/)±3% գլխարկաբոլորքով՝ կարմիր մահուդե եզրաշերտով: Երկու ոսկեգույն փոքր կոճակներով ամրացվում է երկշերտ հյուսված կապը (քուղը)՝ գլխարկաբոլորքի վրա ոսկեգույն ցանցահյուսազարդով: Գլխարկահովարը սև է, լաքապատ: Հովարից վերև՝ գլխարկաբոլորքի վրա, բացի ոսկեգույն լարահյուսից, ամրացվում է կաղնու ճյուղերի տեսքով 2 համաչափ ոսկեկար զարդ՝ 5-տոկոսանոց ոսկե թելերով, որի կենտրոնական մասում զետեղված են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի խորհրդանիշի շրջանակածև կենտրոնի երկու արծիվները, սուրը և ոսկեգույնով երիզված վահանը՝ պատված կնգումի (հայկական կզաքիսի) սպիտակ մորթու պատկերով, իսկ գլխարկագագաթի վրա՝ առջևի կենտրոնական մասում, Հայաստանի Հանրապետության ոսկեգույն զինանշանը: Տաբատ/զույգ/՝ մուգ կապույտ գույնի կտորից՝ (166 գ/մք խտությամբ, 60% բուրդ, 40% Պ/Է) ±3%, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, գոտին գոտեմակողերով, որոնցից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի կարի վրա:Գուլֆիկը մշակվում է շղթայով և կոճկվում է երկու կոճակով, արտաքին գրպանները թեք են, հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան: Եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է կարմիր վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով:Տաբատի աստառը մինչև ծնկները հասնող 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից: Կիտել՝ տոնական սպիտակ(կաթնագույն) |

| | | |
|---|---|---|
| | | կտորից (166 գ/մք խտությամբ 60%բուրդ, 40%Պ/Է) ±3% (համապատասխան լրակազմ ուսադիրներով և թևքանշանով), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով, որի վրա գործվում է անկյունաձև դափնու տերև 5 տոկոսանոց ոսկյա թելերով, սովորական երկկարանի թևքերով, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ,օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90գ/մք ±3% խտությամբ սպիտակ կտորից: Երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն մեծ կոճակներով (ՀՀ զինանշանով)՝ տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի: Օձիքն ունի կարմիր եզրաշերտ. Կիտել՝ մուգ կապույտ կտորից (166 գ/մք խտությամբ 60%բուրդ, 40%Պ/Է) ±3%, (համապատասխան լրակազմ ուսադիրներով և թևքանշանով), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով, որի վրա գործվում է անկյունաձև դափնու տերև 5 տոկոսանոց ոսկյա թելերով, սովորական երկկարանի թևքերով,ձախ թևքին կարվում է թևքանշան, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից: Երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն մեծ կոճակներով(ՀՀ զինանշանով)՝ տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի: Օձիքն ունի կարմիր եզրաշերտ: Փողկապ՝ մուգ կապույտ գույնի, ունի լայնացած ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Փողկապի վրա ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշանը (ձև N 7, նկար 1): Մանրամասների համար օգտվել ‘‘Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և դրանք կրելու կարգը’’ սահմանելու մասին ՀՀ կառավարության 04.09.2014թ N-958-Ն և 23.02.2022թ. թիվ 231-Ն որոշումների դրույթներից: Մատակարարը պարտավոր է իր ֆինասական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ էտալոնային փորձագիտական լաբարատորիայի կողմից տրված գործվածքի բաղադրության վերաբերյալ լաբարատոր հետազոտության եզրակացությունները: • Պահանջվում է անհատական կար յուրաքանչյուր քննիչի համար՝ համապատասխան չափի և ձևի ուսադիրների ամրացմամբ: • Արտաքին տեսքը և գործվածքի երանգը նախօրոք պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: • Արտաքին տեսքը պետք է լինի ըստ ՀՀ քննչական կոմիտեի կողմից հաստատված նմուշի: • Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր քննիչի համազգեստի չափսերը վերցնել ՀՀ |

| | |
|---|---|
| | քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում: • Կարված համազգեստի ցանկացած բաղադրիչի չափս ենթակա է փոփոխման կարողի կողմից տարվա ընթացքում: • Հանդերձանքը պետք է ունենա փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեսականու անվանումը և ծառայողի անուն ազգանունը: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը իրականացնում է մատակարարը` ըստ պատվիրատուի նշված հասցեների: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Текстиль Пип в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՋ-24/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | Форменная одежда (служащего, имеющего классный чин государственного советника юстиции, с соответствующими погонами и шевроном) – комплект Фуражка – темно-синяя, полушерстяная ±3% (с плотностью 317г/ мк, 67% шерсть, 33% п/э), с темно синим ±3% суконным околышем (342г / кв. м. 100% шерсть/) с красным суконным крайним слоем. Две золотые маленькие пуговицы закрепляют двухслойный плетеный рант с золотой сеткой на обмотке околыша. Козырек черный, лакированный. Вверх козырька на околыше, кроме золотистого ранта крепится 2 симметричных золотых украшения в виде ветвей дуба с 5% золотыми нитями, в центральной части которого помещены два орла, меч и щит окаймленный золотым, окаймленный изображением белого меха куницы (армянской куницы), а на вершине шляпы, в передней центральной части, золотой герб Республики Армения. Брюки (парные) из ткани темно синего цвета ±3% (с плотностью 166 г/ м2, 60% шерсти, 40% п/э), контур-прямой, без складок, пояс со шлевками, одна из которых должна находиться на задней шве пояса. Гульфик обрабатывается цепью и застегивается двумя пуговицами, внешние карманы косые, на правой стороне задней части-карман с клапаном, застегивающимся пуговицей. На расстоянии 0,5 см от края растягивается красная нашивка шириной 2,2 см, по всей длине бокового шва брюк. Подкладка брюк из ткани темно синего цвета с плотностью 90г/ м2 ±3% до колен. Китель: праздничный из белой (молочной) ткани ±3% (с плотностью 166 г/ м2, 60% шерсти 40% п/э) (соответствующий комплект с погонами и шевронами), с полуобтягивающей тело поверхностью, толстыми рукавами, отогнутым воротником, на которой наносится |

| | |
|---|---|
| | лавровый лист с 5% золотыми нитями, обычными рукавами с двумя швами, которые в нижней части имеют красный краевой шов шириной 2,5 мм, с боку имеют вшивные карманы в разрезе, закрывающемся клапаном, с обеих сторон имеет внутренний карман. Китель с передней части повторно вшивается склеивающей тканью, а в грудной клетке- склеивающей тканью и льняно-шерстяным полотном. Отдельные детали также-клапаны карманов, воротник повторно сшивается склеивающейся тканью и льняно-шерстяным полотном. Подкладка из белой ткани с плотностью 90 г/м2 ±3%. С 6 большими золотистыми пуговицами (с гербом РА), расположенными в двух рядах, внизу, без разреза. Воротник имеет красный краевой слой. Китель: из темно синей ткани ±3% (с плотностью 166 г/ м2, 60% шерсть, 40% п/э) (соответствующий комплект с погонами и шевронами), с полуобтягивающей тело поверхностью, толстыми рукавами, отогнутым воротником, на которой наносится лавровый лист с 5% золотыми нитями, обычными рукавами с двумя швами, на левой рукаве сшивается шеврон, которые в нижней части имеют красный краевой шов шириной 2,5 мм, с боку имеют вшивные карманы в разрезе, закрывающемся клапаном, с обеих сторон имеет внутренний карман. Китель с передней части повторно вшивается склеивающей тканью, а в грудной клетке- склеивающей тканью и льняно-шерстяным полотном. Отдельные детали также-клапаны карманов, воротник повторно сшивается склеивающейся тканью и льняно-шерстяным полотном. Подкладка из синей ткани с плотностью 90 г/ м2 ±3%. С 6 большими золотистыми пуговицами (с гербом РА), расположенными в двух рядах, внизу, без разреза. Воротник имеет красный краевой слой. Галстук темно-синего цвета, имеет крой с расширенным контуром. Готовый вид заканчивается под острым углом, наверху-постоянным узлом. На галстуке вышивается герб РА (форма N 7, рис. 1). Для получения подробной информации пользоваться положениями постановлений Правительства РА об установлении «Описание форменной одежды, эмблем служащих Следственного комитета Республики Армения и порядка их ношения» № -958-Н от 04.09.2014 г. и № 231-н от 23.02.2022 г. Поставщик обязан за счет своих финансовых средств представить заключения лабораторного исследования состава ткани, выданной сертифицированной, лицензированной или эталонной экспертной лабораторией в РА. • Требуется индивидуальное шитье для каждого следователя с закреплением погонов соответствующего размера и формы. • Внешний вид и оттенок ткани необходимо заранее согласовать с заказчиком. • Внешний вид должен быть согласно образцу, утвержденному Следственным комитетом РА. • Поставщик обязан брать размеры формы каждого следователя в соответствующих подразделениях Следственного комитета РА. • Размер любого компонента сшитой формы может быть изменен портным в течение года. • Комплект должен иметь упаковку, на которой должен быть указан размер, название производящей организации, месяц и год производства, название ассортимента и имя, |

| | |
|---|---|
| | фамилия служащего. Товар должен быть неиспользованным. Поставка товаров осуществляется поставщиком по указанным адресам заказчика. |